ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀԿԳՄՍՆ «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի/այսուհետ՝ Քոլեջ/ «Ֆիզկուլտուրա» - 1 դրույք, «Մաթեմատիկա» - 1 դրույք, «Ֆիզիկա» - 0,5 դրույք, «Ֆրանսերեն» - 1 դրույք, «ՆԶՊ» - 0,5 դրույք, «Աշխարհագրություն» - 1 դրույք, «Բանկային գործի հիմունքներ» - 0,5 դրույք, «Հաշվապահական հաշվառումը բանկում»- 0,5 ծանրաբեռնվածությամբ առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
- Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը.

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. Անձնագիրը (բնօրինակը և պատճենը),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Զև 4),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ

համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են 2025 թվականի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 16:00:

Մրցույթը կկայանա 2025 թվականի սեպտեմբերի 16-ին ժամը 13:00-ին՝ Քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)23-99-91, (055)05-20-38 հեռախոսահամարներով:

Հարգանքով՝

Տնօրեն Մ. Մինասյան